Կարգապահական գործ թիվ ԿԳ-25089

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԽՈՒԴՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ և զեկուցող անդամ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյան,

մասնակցությամբ՝ փաստաբան Հովհաննես Խուդոյանի,

քննության առնելով փաստաբան Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2040) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության պետ՝ Գրիգոր Մնոյանը **(այսուհետ նաև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ նաև՝ Պալատ),** հայտնել է, որ փաստաբան Հովհաննես Խուդոյանը հանդիսանում է թիվ 58223225 քրեական վարույթով Վազգեն Գալստանյանի պաշտպանը և պարբերաբար հանդես է գալիս հրապարակային ելույթներով քրեական վարույթին վերաբերվող հանգամանքներով:

Թիվ ԿԳ-25089-2-Ա
18.03.2026թ.

Դիմումի համաձայն՝ փաստաբան Հովհաննես Խուդոյանը «Ֆեյսբուք» սոցիալական կայքի «Hovhannes Khudoyan» էջում կատարել է որոշակի հրապարակումներ:

Մասնավորապես,

- 11.09.2025 թվականին կատարվել է հետևյալ հրապարակումը՝ *«Այսօր ԱԺ-ում էլի ակտիվացել էին տեղեկատվական ահաբեկիչները, հին ստերն էին բերում, արդեն բացահայտված կեղծիքներին նոր մեկնաբանություններ էին տալիս, մեկն էլ միտք երկնեց, որ դե եթե փաստաբանները այլ նյութերի մասին բան չեն ասել, ուրեմն մնացած ամեն ինչ նորմալ է:*

Չէ, չսիրելիներ, այդքան մի շտապեք, նոր բաներ էլ են լինելու, ուղղակի մոլորության մեջ մի ընկեք, որ պաշտպանական մարտավարությունը պիտի կառուցվի ձեր քմահաճույքով:

Առաջնայինը, որ անհրաժեշտ էր այս փուլում, արդեն արվել է՝ ԱՊԱՑՈՒՑՎԵԼ է, որ ***դուք, ձեր քննչականի պետը, ձեր գլխավոր դատախազը ստախոսներ եք****: Մնացածը՝ շուտով:»*

- 04.10.2025 թվականին կատարվել է հետևյալ հրապարակումը՝ *«ԱՆՊԱՏՎԱԲԵՐ Է ՔՆՆԻՉ, ԴԱՏԱԽԱՋ ԿԱՄ ԴԱՏԱՎՈՐ ԼԻՆԵԼԸ, ՔԱՆԻ ԴԵՌ ՀԱԼԱԾՎՈՒՄ ԵՆ ՍՐԲԱՋԱՆՆԵՐԸ*

Զինվորական ծառայության մեջ, գոնե իմ ծառայության տարիներին, կար պատասխանատվության հետաքրքիր, գուցե ոչ միշտ արդար, բայց շատ արդյունավետ եղանակ՝ խմբային պատասխանատվությունը. զինծառայողի թերացման համար պատասխանատու է ողջ սպորաբաժանումը: Ընդ որում, դա կանոնագրքերով չնախատեսված պատժի ձև էր: Վատ բան է արել զինծառայողը. ոչ թե գրավոր վարույթով նկատողություն է ստանում կամ զրկվում արձակուրդից, այլ շատ արագ ամբողջ սպորաբաժանումը դուրս է գալիս ֆիզպատրաստության դասի, կամ վարժվում քիմիական զենքից պաշտպանության միջոցներին՝ հակագազով վազք և այլն: Անառողջ միջավայրի դեպքում կարող է կոնֆլիկտներ առաջացնել սպորաբաժանման մեջ, բայց գոնե իմ ծառայության ընթացքում բոլորը պատվով էին ընդունում կոլեկտիվ պատասխանատվությունը:

Նրանից հետո, երբ քննչականն ու դատախազությունը, դատարանները սկսել են ակնհայտ ապօրինի ու հակաբարոյական հալածանքները Հայ առաքելական եկեղեցու հոգևորականների նկատմամբ, իմ պարտքն եմ համարում նախ իմ կողմից կիրառել կոլեկտիվ պատասխանատվության միջոց բոլոր քննիչների, դատախազների ու դատավորների հանդեպ, ապա և քարոզել ու համոզել գործընկերներիս միանալ այդ գործին:

Բոլոր ծառայամիտ քննիչներն են նպաստել այն համակարգի ստեղծմանը, որ իրենցից պատահական մեկը գործ կարի հոգևորականների վրա: Բոլոր պարկեշտ ու բարեխիղճ քննիչներն էլ են մեղավոր, որ համակերպվել են այդպիսի համակարգում աշխատելու ու իրենց գործընկերների ձեռքը չբռնելու մտքի հետ:

Եվ բոլոր դատախազներն են մեղավոր, որ ստեղծել են այնպիսի գերատեսչություն, ***որի***

ղեկավարը կարող է բացահայտ սուտ խոսել ու չկարմրել: *Բոլոր դատախազներն են մեղավոր, պարկեշտ թե անպարկեշտ, որ իրենց գործընկեր Հայկ Հովհաննիսյանը ցանկանում է կալանավորված տեսնել ծանր հիվանդությունից հրաշքով ապաքինված մարդուն:*

Եվ բոլոր դատավորներն են մեղավոր, որ դատական իշխանությունը քաղաքական պատվերների են ենթարկել այն աստիճանի, որ անհաղորդ են բոլոր մարդկային արժեքներին:

Չէ, բնականաբար, ես որոշիչ դեր չունեմ այս մարդկանց կյանքում, ինձնից շատ բան կախված չէ: Բայց խոստանում եմ, որ քանի դեռ իրենց կողմից հալածված են հոգևորականները, ես ընտրում եմ հաղորդակցության դեստրուկտիվ եղանակը:

Այսուհետ անհանդուրժող եմ լինելու նույնիսկ ամենաչնչին թերացման դեմ, լինի դա դատական ակտը մեկ օր ուշացնել, թե ընտանեկան առիթով նիստ հետաձգելու անհրաժեշտություն, դատավարական փաստաթղթի մեջ առկա վրիպակ, թե քննչական գործողության հարմար ժամի ընտրություն:

Խոսելու ենք չոր օրենքով, առանց մարդկային վերաբերմունքի: Եթե դժգոհ եք, որ ձեր դեմ կարգապահական պատասխանատվության դիմում եմ ներկայացրել կամ հաղորդում, ըմբռնումով չեմ մոտենում ձեր անձնական խնդիրներին, ***բողոքները կհասցեագրեք Արմինե Մելիքսեթյանին, Արգամ Դալլաքյանին, Հայկ Հովհաննիսյանին և ընկերներին, հանրությանը չերևացող, բայց իրենց սև գործն անող քննիչներին:***

Քանի դեռ այս մարդիկ ձեր գործընկերներն են, անպատվաբեր է լինել քննիչ, դատախազ, դատավոր:»:

- 08.10.2025 թվականին կատարվել է հետևյալ հրապարակումը՝ ***«Նիկոլը էսօր հանդիպել է այլ նիկոլների, խոսել են իրենց պատկերացրած բարոյականությունից:***

Պարզվում է, էսօր այլ նիկոլների մասնագիտական օրն է եղել, որը հեչ շնորհավորելու բան չի, քանզի քանի դեռ կալանավորված են սրբազաններ, ՔՆՆԻՉ ԼԻՆԵԼԸ ԱՄՈԹ Է:»:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ փաստաբան Հովհաննես Խուդոյանի նկատմամբ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 19.12.2025 թվականին Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 25.12.2025 թվականին ներկայացրել է գրություն դրան կցելով քերական վարույթի վերաբերյալ որոշ փաստաթղթեր:

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության

գլխավոր վարչության պետ Ա. Մելիքյանը նույնպես ներկայացրել է գրություն՝ դրան կցելով քերական վարույթի վերաբերյալ որոշ փաստաթղթեր:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը դիմումի և կից ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքներով Պալատի նախագահը 20.10.2025 թվականի 01/03.3/1433-2025 գրությունով Փաստաբանից պահանջել է բացատրություն:

Փաստաբանը չի ներկայացրել բացատրություն ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության պետ Գ. Մնոյանի դիմումի կապակցությամբ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 19.12.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց կամ բացատրություն:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 07.11.2025թ. թիվ 316-Ա/ԿԳ-25089 որոշմամբ փաստաբան Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանի նկատմամբ 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագրք)** 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

07.11.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 07.01.2026թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-ին կետում նշված փաստը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 07.01.2026թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 04.02.2026թ. ժամը 18:30-ին, 18.03.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Հովհաննես Խուդոյանը իր «Ֆեյսբուք» սոցիալական կայքի «Hovhannes Khudoyan» էջում կատարել է հետևյալ հրապարակումները.

- 11.09.2025 թվականին կատարվել է հետևյալ հրապարակումը՝ *«Այսօր ԱԺ-ում էլի ակտիվացել էին տեղեկատվական ահաբեկիչները, հին ստերն էին բերում, արդեն բացահայտված կեղծիքներին նոր մեկնաբանություններ էին տալիս, մեկն էլ միտք երկնեց, որ դե եթե փաստաբանները այլ նյութերի մասին բան չեն ասել, ուրեմն մնացած ամեն ինչ նորմալ է:*

Չէ, չսիրելիներ, այդքան մի շտապեք, նոր բաներ էլ են լինելու, ուղղակի մոլորության մեջ մի ընկեք, որ պաշտպանական մարտավարությունը պիտի կառուցվի ձեր քմահաճույքով:

Առաջնայինը, որ անհրաժեշտ էր այս փուլում, արդեն արվել է՝ ԱՊԱՅՈՒՅՎԵԼ է, որ ***դուք, ձեր քննչականի պետը, ձեր գլխավոր դատախազը ստախոսներ եք****: Մնացածը՝ շուտով:»*

- 04.10.2025 թվականին կատարվել է հետևյալ հրապարակումը՝ *«ԱՆՊԱՏՎԱԲԵՐ Է ՔՆՆԻՉ, ԴԱՏԱԽԱՉ ԿԱՄ ԴԱՏԱՎՈՐ ԼԻՆԵԼԸ, ՔԱՆԻ ԴԵՌ ՀԱԼԱԾՎՈՒՄ ԵՆ ՍՐԲԱԶԱՆՆԵՐԸ*

Զինվորական ծառայության մեջ, գոնե իմ ծառայության տարիներին, կար պատասխանատվության հետաքրքիր, գուցե ոչ միշտ արդար, բայց շատ արդյունավետ եղանակ՝ խմբային պատասխանատվությունը. զինծառայողի թերացման համար պատասխանատու է ողջ ստորաբաժանումը: Ընդ որում, դա կանոնագրքերով չնախատեսված պատժի ձև էր: Վատ բան է արել զինծառայողը. ոչ թե գրավոր վարույթով նկատողություն է ստանում կամ զրկվում արձակուրդից, այլ շատ արագ ամբողջ ստորաբաժանումը դուրս է գալիս ֆիզպատրաստության դասի, կամ վարժվում քիմիական զենքից պաշտպանության միջոցներին՝ հակագազով վազք և այլն: Անառողջ միջավայրի դեպքում կարող է կոնֆլիկտներ առաջացնել ստորաբաժանման մեջ, բայց գոնե իմ ծառայության ընթացքում բոլորը պատվով էին ընդունում կոլեկտիվ պատասխանատվությունը:

Նրանից հետո, երբ քննչականն ու դատախազությունը, դատարանները սկսել են ակնհայտ ապօրինի ու հակաբարոյական հալածանքները Հայ առաքելական եկեղեցու հոգևորականների նկատմամբ, իմ պարտքն եմ համարում նախ իմ կողմից կիրառել կոլեկտիվ պատասխանատվության միջոց բոլոր քննիչների, դատախազների ու դատավորների հանդեպ, ապա և քարոզել ու համոզել գործընկերներիս միանալ այդ գործին:

Բոլոր ծառայամիտ քննիչներն են նպաստել այն համակարգի ստեղծմանը, որ իրենցից պատահական մեկը գործ կարի հոգևորականների վրա: Բոլոր պարկեշտ ու բարեխիղճ քննիչներն էլ են մեղավոր, որ համակերպվել են այդպիսի համակարգում աշխատելու ու իրենց գործընկերների ձեռքը չբռնելու մտքի հետ:

Եվ բոլոր դատախազներն են մեղավոր, որ ստեղծել են այնպիսի գերատեսչություն, ***որի ղեկավարը կարող է բացահայտ սուտ խոսել ու չկարմրել:*** *Բոլոր դատախազներն են մեղավոր, պարկեշտ թե անպարկեշտ, որ իրենց գործընկեր Հայկ Հովհաննիսյանը ցանկանում է կալանավորված տեսնել ծանր հիվանդությունից հրաշքով ապաքինված մարդուն:*

Եվ բոլոր դատավորներն են մեղավոր, որ դատական իշխանությունը քաղաքական պատվերների են ենթարկել այն աստիճանի, որ անհաղորդ են բոլոր մարդկային արժեքներին:

Չէ, բնականաբար, ես որոշիչ դեր չունեմ այս մարդկանց կյանքում, ինձնից շատ բան կախված չէ: Բայց խոստանում եմ, որ քանի դեռ իրենց կողմից հալածված են հոգևորականները, ես ընտրում եմ հաղորդակցության դեստրուկտիվ եղանակը:

Այսուհետ անհանդուրժող եմ լինելու նույնիսկ ամենաչնչին թերացման դեմ, լինի դա դատական ակտը մեկ օր ուշացնել, թե ընտանեկան առիթով նիստ հետաձգելու անհրաժեշտություն, դատավարական փաստաթղթի մեջ առկա վրիպակ, թե քննչական գործողության հարմար ժամի ընտրություն:

Խոսելու ենք չոր օրենքով, առանց մարդկային վերաբերմունքի: Եթե դժգոհ եք, որ ձեր դեմ կարգապահական պատասխանատվության դիմում եմ ներկայացրել կամ հաղորդում, ըմբռնումով չեմ մոտենում ձեր անձնական խնդիրներին, ***բողոքները կհասցեագրեք Արմինե Մելիքսեթյանին, Արգամ Դալլաքյանին, Հայկ Հովհաննիսյանին և ընկերներին, հանրությանը չերևացող, բայց իրենց սև գործն անող քննիչներին:***

Քանի դեռ այս մարդիկ ձեր գործընկերներն են, անպատվաբեր է լինել քննիչ, դատախազ, դատավոր:»

- 08.10.2025 թվականին կատարվել է հետևյալ հրապարակումը՝ ***«Նիկոլը էսօր հանդիպել է այլ նիկոլների, խոսել են իրենց պատկերացրած բարոյականությունից:***

Պարզվում է, էսօր այլ նիկոլների մասնագիտական օրն է եղել, որը հեչ շնորհավորելու բան չի, քանզի քանի դեռ կալանավորված են սրբազաններ, ՔՆՆԻՉ ԼԻՆԵԼԸ ԱՄՈԹ Է:»: *Նշված փաստերը հաստատվում են Փաստաբանի սոցիալական ցանցի անձնական էջի արտատպումով: Նշված փաստերը հաստատված են համարվում,*

քանի որ չեն վիճարկվել Փաստաբանի կողմից:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Հովհաննես Խուդոյանը փաստաբան է հանդիսանում 28.11.2015 թվականից և 2021-2026թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Հովհաննես Խուդոյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Ըստ այդմ, անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի խախտմանը Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է հուսալի*

այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 16 (2013) կարծիքի 25-րդ կետի համաձայն՝ *... պրոֆեսիոնալ գործընկերների նկատմամբ հարգանքի, օրենքի գերակայության և արդարադատության արդար իրականացման հարգանքի՝ Փաստաբանների և իրավաբանների միությունների եվրոպական խորհրդի «Եվրոպայում իրավաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների մասին» խարտիայում սահմանված սկզբունքներով պահանջվում է* ***խուսափել գործընկերների,*** *առանձին դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների* ***վիրավորական քննադատությունից***:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ կոչված է նպաստելու արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության ընկալման համար:

Այս համատեքստում, նշվածը սերտորեն փոխկապակցված է Կանոնագրքի 2.2.2 ենթակետի կարգավորման հետ, որով փաստաբանի վրա դրվում է համակողմանի պարտականություն իր գործունեության բոլոր բնագավառներում նպաստել փաստաբանության մասնագիտական բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը: Սույն պարտականությունն ունի ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ դրսևորում: Առաջին դեպքում ենթադրվում է փաստաբանի կողմից որոշակի ակտիվ գործողությունների կատարում սեփական մասնագիտական և անձնական վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ այդպիսով իր նպաստը բերելով փաստաբանի մասնագիտության հանրային վարկանիշի բարձրացմանը: Նեգատիվ պարտականությունը փաստաբանի պատշաճ վարքագծի նվազագույն չեմն է,

երբ փաստաբանից պահանջվում է առնվազն չկատարել հակաօրինական և փաստաբանի մասնագիտության հանրային վարկը խաթարող գործողություն կամ անգործություն:

Փաստաբանի՝ որպես անհատի գործունեությունը հասարակության կողմից ասոցացվում է փաստաբանի ինստիտուտի հետ ընդհանրապես, ուստի և՝ փաստաբանն իր առօրյա գործունեության իրականացման ընթացքում պետք է դրևսորի այնպիսի վարքագիծ, որը կնպաստի փաստաբանի կոչման և առաքելության նկատմամբ հարգանքի և վստահության բարձրացմանը, ինչը փաստաբանի բարոյական պարտավորությունն է: Փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների և այլ անձանց անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելը, միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը:

Ըստ այդմ, Պալատի նախագահի 07.11.2025թ. թիվ 316-Ա/ԿԳ-25089 որոշմամբ քննարկման առարկա է դարձվում Փաստաբանի կողմից վերը նշված արտահայտություններ կատարելու վարքագիծը:

Տվյալ դեպքում, Դիմողն, ըստ էության, Փաստաբանին վերագրում է «Ֆեյսբուք» սոցիալական կայքում ՀՀ քննչական ապարատի նկատմամբ այնպիսի արտահայտությունների կատարում, որի հետևանքով վերջինս կասկածի տակ է դրել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբան Հովհաննես Խուդոյանը «Ֆեյսբուք» սոցիալական կայքում իրեն պատկանող «Hovhannes Khudoyan» օգտատիրոջ էջում ժամանակ առ ժամանակ կատարել է մի շարք հրապարակումներ, որոնցում թույլ է տվել կոշտ, քննադատական և վիրավորական արտահայտություններ:

Այսպիսով, անհրաժեշտ է առանձին-առանձին անդրադառնալ Փաստաբանի հրապարակումներին:

Հաշվի առնելով, որ սույն որոշման 5-րդ գլխում արդեն իսկ ամբողջությամբ ներկայացված են Փաստաբանի հրապարակումները և խուսափելով կրկնություններից՝ Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ այդ հրապարակումների միայն այն հատվածներին, որոնք պարունակում են անթույլատրելի ձևակերպումներ:

1. Փաստաբանը 11.09.2025 թվականին կատարել է հետևյալ հրապարակումը «*...Առաջնայինը, որ անհրաժեշտ էր այս փուլում, արդեն արվել է՝ ԱՊԱՅՈՒՑՎԵԼ Է, որ* ***դուք, ձեր քննչականի պետը, ձեր գլխավոր դատախազը սպախոսներ եք****: Մնացածը՝ շուտով.:*»

Վերոնշյալ հրապարակման առնչությամբ Հանձնաժողովը գտնում է, որ «սպախոսներ եք» ձևակերպումը, ուղղված կոնկրետ պաշտոնատար անձանց, իր բնույթով պարունակում է գնահատողական դատողություն, որը արտահայտված է կտրուկ և վիրավորական ձևով և դուրս է փաստաբանի մասնագիտական վարքագծին ներկայացվող զսպվածության և

կոռեկտության սահմաններից: Նման բառապաշարի կիրառումը չի կարող դիտվել որպես բացառապես իրավաչափ քննադատություն՝ այն ձեռք է բերում վիրավորական բնույթ:

Թեև Փաստաբանը, որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, ունի խոսքի ազատության իրավունք, այդ թվում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու ազատություն, այնուամենայնիվ, նշված ազատությունը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակումների՝ պայմանավորված մասնագիտական էթիկայի պահանջներով:

Այս համատեքստում, Հանձնաժողովը կարևորում է, որ Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է խուսափել այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը: Նշված նորմը փաստաբանի վրա դնում է համակողմանի պարտականություն իր գործունեության բոլոր բնագավառներում՝ ներառյալ հրապարակային արտահայտությունները, նպաստելու փաստաբանության մասնագիտական բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը: Վերոնշյալ պարտականությունն ունի ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ դրսևորում: Պոզիտիվ առումով փաստաբանը պետք է իր վարքագծով նպաստի մասնագիտության հանրային վարկանիշի բարձրացմանը, մինչդեռ նեգատիվ առումով՝ պարտավոր է առնվազն ձեռնպահ մնալ այնպիսի արտահայտություններից և գործողություններից, որոնք կարող են խաթարել փաստաբանի կամ փաստաբանության հեղինակությունը:

Տվյալ դեպքում, փաստաբանի կողմից օգտագործված «***դուք, ձեր քննչականի պետը, ձեր գլխավոր դատախազը սպահոսներ եք***» ձևակերպումը չի համապատասխանում վերոնշյալ նվազագույն չափանիշին:

2. Փաստաբանը 04.10.2025 թվականին կատարել է հետևյալ հրապարակումը. «*...Եվ բոլոր դատախազներն են մեղավոր, որ սպեղծել են այնպիսի գերատեսչություն,* ***որի ղեկավարը կարող է բացահայտ սուտ խոսել ու չկարմրել:***»

Խոսելու ենք չոր օրենքով, առանց մարդկային վերաբերմունքի: Եթե դժգոհ եք, որ ձեր դեմ կարգապահական պատասխանատվության դիմում եմ ներկայացրել կամ հաղորդում, ըմբռնումով չեմ մոտենում ձեր անձնական խնդիրներին, ***բողոքները կհասցեագրեք Արմինե Մելիքսեթյանին, Արգամ Դալլաքյանին, Հայկ Հովհաննիսյանին և ընկերներին, հանրությանը չերևացող, բայց իրենց սև գործն անող քննիչներին:***

Քանի դեռ այս մարդիկ ձեր գործընկերներն են, անպատվաբեր է լինել քննիչ, դատախազ, դատավոր:»

Նշված հրապարակման առնչությամբ Հանձնաժողովը արձանագրում է, որ փաստաբանը մի շարք ձևակերպումներով անդրադարձել է դատախազների, քննիչների և դատավորների գործունեությանը՝ կիրառելով ընդհանրացնող և արժեզրկող բնույթի արտահայտություններ:

Մասնավորապես, «բոլոր դատախազներն են մեղավոր», «ստեղծել են այնպիսի գերատեսչություն, որի ղեկավարը կարող է բացահայտ սուտ խոսել», ինչպես նաև «անպատվաբեր է լինել քննիչ, դատախազ, դատավոր» ձևակերպումներն իրենց բովանդակությամբ դուրս են գալիս մասնագիտական քննադատության թույլատրելի սահմաններից: Նշված արտահայտությունները ոչ միայն կտրուկ են, այլև ունեն ընդհանրացնող բնույթ՝ վերագրելով բացասական հատկանիշներ ամբողջ մասնագիտական խմբերին, ինչն օբյեկտիվորեն կարող է ընկալվել որպես վիրավորական և արժանապատվությունը նվաստացնող:

Հանձնաժողովը գտնում է, որ նման ձևակերպումները չեն կարող դիտվել որպես փաստերի վրա հիմնված իրավաչափ քննադատություն կամ իրավապաշտպան գործունեության շրջանակներում արտահայտված դիրքորոշում: Դրանք իրենց էությամբ պարունակում են արժեքային դատողություններ, որոնք արտահայտված են վիրավորական և անհարգալից եղանակով՝ խաթարելով մասնագիտական քննարկման պատշաճ սահմանները:

Բացի այդ, հրապարակման այն հատվածը, որով փաստաբանը կոչ է անում բողոքները հասցեագրել կոնկրետ անձանց՝ բնութագրելով նրանց որպես «հանրությանը չերևացող, բայց իրենց սև գործն անող քննիչներ», ևս պարունակում է ակնհայտ բացասական ենթատեքստ, որը չի բխում փաստաբանի՝ որպես իրավական համայնքի անդամի վարքագծի կանոններից:

Հանձնաժողովը վերահաստատում է, որ փաստաբանի խոսքի ազատությունը թեև ներառում է նաև սուր և քննադատական արտահայտությունների իրավունք, այնուամենայնիվ, սահմանափակվում է մասնագիտական էթիկայի պահանջներով: Փաստաբանը պարտավոր է իր հրապարակային արտահայտություններում պահպանել զսպվածություն և հարգալից վերաբերմունք հատկապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է արդարադատության համակարգի այլ սուբյեկտներին:

Տվյալ պարագայում, Փաստաբանը, օգտագործելով այս վերոգրյալ ձևակերպումները, «հատել է» առողջ քննադատության սահմանները:

3. Փաստաբանը 08.10.2025 թվականին կատարել է հետևյալ հրապարակումը՝ ***«Նիկոլը էսօր հանդիպել է այլ նիկոլների, խոսել են իրենց պատկերացրած բարոյականությունից:***

Պարզվում է, էսօր այլ նիկոլների մասնագիտական օրն է եղել, որը հեչ շնորհավորելու բան չի, քանզի քանի դեռ կալանավորված են սրբազաններ, ՔՆՆԻՉ ԼԻՆԵԼԸ ԱՄՈԹ Է:»:

08.10.2025 թվականին կատարված հրապարակման առնչությամբ Հանձնաժողովը արձանագրում է, որ փաստաբանը կիրառել է ինչպես քաղաքական ենթատեքստ ունեցող, այնպես էլ մասնագիտական խմբերի նկատմամբ արժեզրկող բնույթի ձևակերպումներ:

Մասնավորապես, «Նիկոլը էսօր հանդիպել է այլ նիկոլների» ձևակերպումը, որ

բնույթով, ունի ակնհայտ քաղաքական բովանդակություն և կրում է ծաղրական երանգ՝ ուղղված կոնկրետ քաղաքական գործչի և, ընդհանրացված ձևով, նրա հետ ասոցացվող անձանց նկատմամբ: Թեև փաստաբանը, որպես քաղաքացի, ունի քաղաքական հարցերի վերաբերյալ կարծիք արտահայտելու իրավունք, այնուամենայնիվ, տվյալ արտահայտությունը դուրս է գալիս զուսպ և կոռեկտ քաղաքական խոսքի սահմաններից՝ ձեռք բերելով վիրավորական բնույթ՝ առավել ևս այն դեպքում, երբ անձն այդ իրավիճակում հանդես է գալիս որպես փաստաբան:

Միաժամանակ, «քանի դեռ կալանավորված են սրբազաններ, ՔՆՆԻՉ ԼԻՆԵԼԸ ԱՄՈԹ Է» ձևակերպումը պարունակում է ընդհանրացնող և բացարձակ գնահատական՝ ուղղված քննիչների մասնագիտական խմբին՝ նրանց գործունեությունը ներկայացնելով որպես «ամոթալի»: Նման ձևակերպումը ոչ միայն չի սահմանափակվում կոնկրետ դեպքի քննադատությամբ, այլ արժեզրկում է ողջ մասնագիտական գործունեությունը՝ առանց անհատականացման կամ փաստական հենքի:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ արտահայտությունները, դիտարկված իրենց համակցության մեջ, ունեն ինչպես քաղաքական, այնպես էլ մասնագիտական հարաբերությունների վրա ազդող բովանդակություն, և չեն համապատասխանում փաստաբանի՝ որպես իրավական համայնքի անդամի վարքագծին ներկայացվող պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ փաստաբանի կողմից կատարված հրապարակումը պարունակում է անթույլատրելի ձևակերպումներ, որոնք իրենց քաղաքական և մասնագիտական բովանդակությամբ խախտում են փաստաբանի վարքագծի կանոններով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցները, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից կարգապահական նիստերի ընթացքում արտահայտած դիրքորոշումներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները**:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել*

կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ Փաստաբանի մոտ առկա տույժերը:

Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Փաստաբանը 2021–2026 թվականների ընթացքում կարգապահական տույժ չի ունեցել: Ուշագրավ և կարևոր է նաև այն փաստը, որ Փաստաբանի հրապարակումներին նախորդել են ՀՀ քննչական կոմիտեի կողմից կատարված ոչ պակաս կոշտ քննադատական հրապարակումները: Մասնավորապես՝ ՀՀ քննչական կոմիտեի 14.08.2025թ. հրապարակման մեջ նշվել է. *«Տարակուսանք է առաջացնում հատկապես պաշտպան Հովհաննես Խուդոյանի անտրտունջ և աննահանջ դատավարական վարքագիծը, ով անձնվիրաբար և համառորեն այս ողջ ընթացքում փորձում է գտնել «պատերի տակ գյուլելու և ընտանիքներին կոմպենսացիա տրամադրելու» արտահայտության վերաբերյալ Բագրատ Գալստանյանի հնչեցրած մտքի իրական թիրախներն՝ մի դեպքում դա վերագրելով «դասալիքներին», մյուս դեպքում՝ «թմրավաճառներին», «թիմակիցներն» և այդպես շարունակ:»:*

ՀՀ քննչական կոմիտեի կողմից նույն հրապարկման մեջ նշվել է նաև հետևյալը. *«Ակնհայտ է, որ պաշտպանության կողմը նման գործելաոճով փորձում է ազդել հանրային տրամադրությունների կամ կարծիքի վրա՝ դրանով իսկ նպատակ հետապնդելով նսեմացնել քրեական վարույթով ձեռք բերված իր տեսակով եզակի և անփոխարինելի նշանակություն ունեցող ապացուցողական զանգվածը, որը ձեռք է բերվել բացառապես օրենքով սահմանված պատշաճ ընթացակարգերի շրջանակներում և իրավացիորեն դրվել անձանց մեղքը հաստատող ապացուցողական զանգվածում:»:*

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը, կատարելով հիշատակված արտահայտությունները, փաստացի հակադարձել է Դիմողի արտահայտած դիրքորոշումներին: Այնուամենայնիվ, Հանձնաժողովն ընդգծում է, որ Փաստաբանը կարող

էր այլ եղանակով արձագանքել կամ նույնիսկ չարձագանքել Դիմողի հայտարարություններին՝ կանխատեսելով իր արտահայտությունների կատարման և հրապարակման հնարավոր հետևանքները:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանին (արտոնագիր՝ թիվ 2040) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25089-2-Ա
18 մարտի 2026թ.
ք.Երևան